գիտական ընկերութեան յիշատակարանների մէջ։

Կարսի փոխանորդ Արժ. Եղիշէ վարդ. Մուրադեան ուխտեալ բացակայութիւնից յետոյ Ս. Պետերբուրգում Մայր Աթոռ եկաւ և իւր գործերի հաշիւը Նորին Վեհափառութեան ներկայացնելուց յետոյ մեկնեցաւ իւր պաշտօնատեղին՝ Կարս։

Արժ. Կոմիտաս վարդապետ Գէորգեան՝ որ երեք տարուց ի վեր Գերմանիայում ուսումնասիրում էր երաժշտութեան արուեստը, վերադարձաւ Մայր Աթոռ և ստանձնեց Գէորգեան Ճեմարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնը։

Վեհ. Հայրապետի հրամանաւ ս. Էջմիածնայ վանքի հիւրընկալ Արժ. Իսահակ վարդ. Տ. Մէլքայէլեան Դորու յաջորդ նշանակուեցաւ։

Ս. Էջմիածնայ միաբաններից Արժ. Բենիկ վարդապետ կարգուեցաւ տեսուչ Երևանի թեմական դպրանոցի։

Երևանի թեմի Առաջ. Փոխանորդ Դեր. Ներսէս Արքեպիսկոպոսի համար, որ առաջարկուած էր Բեսարաբիոյ թեմի առաջնորդ, ստացուեցաւ Կայսերական հաստատութեան վաւերագիրը։ Ն. Բ. Սրբազնութիւն պատրաստուում է մեկնել դէպի իւր նոր պաշտօնատեղին։

Տպարանական ժողովի անդամ Շնորհ. Ղազար սարկաւագ Նորին Վեհափառութեան կողմից թոյլտուութիւն ստանալով՝ պր. Մանթաշեանի բարերարութեամբ Դորպատ գնաց՝ համալսարանում ուսանելու համար։ Նրա տեղ Տպարանական ժողովի անդամ կարգուեցաւ այս տարուայ ճեմարանաւարտներից Շնորհ. Գրիգոր սարկաւագ։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՏՈՒՈՑ ԱԹՈՌՈՑ

Գէորգեան Ճեմարան մտնել ցանկացող աշակերտներից, ինչպէս և անցեալ տարուանից վերաքննելի աշակերտների քննութիւնները սկսան սեպտ. 1-ից և տևեցին մինչև սեպտ. 5։ Այս տարուայ նոր ընդունուած աշակերտների թիւն է տասնի քան քառասուն։ Դասերն սկսան սեպտ. 7, երեքշաբթի օրը։

Այս տարի Ճեմարան հրաւիրուած նոր ուսուցիչներն են. Արժ. Կոմիտաս վարդապետ Գէորգեան՝ որ նոր է վերադարձել Գերմանիայից և ուսանելու է եկեղեցական երաժշտութիւն։ — Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնի նորաւարտ կանդիդատ պր. Սիրական Տիզրանեան՝ որ ուսանելու է եկեղեցական իրաւագիտութիւն. պր. Յովհաննէս Բախչեան, որ պէտք է ուսանի Ռուսաց լեզու։ Երեք յարգելի ուսուցիչներն արդէն սկսել են իրենց դասերը։

Պաշտօնի են հրաւիրուած նաև անցեալ տարուայ Ճեմարանաւարտներից՝ Քերոբէ Միրաքեան, իբրև վերակացու, և այս տարուայ աւարտողներից՝ Յակոբ Արիստակիսեան, իբրև ուսուցիչ ստորին դասարաններում։

Ճեմարանի Տեսուչ և Արարատի խմբագիր Տ. Կարապետ վարդապետ ընտանեկան պատճառներով երկու շաբաթուայ համար արձակուրդ ստացած լինելով հայրենիք գնալու, օգոստ. 28-ին վերադարձաւ և անմիջապէս զբաղուել սկսաւ նորեկների ընդունելութեանց քննութիւններով։

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԷԱԹՃԵԱՆ

Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալէաթճեան, որ բաւական ժամանակ ի վեր տառապում էր ուղղի կակղացումից կոչուած ծանր հիւանդու-

թեամբ՝ ի Տէր հանգեաւ Կ. Պոլսում օգոստոս 15 ին՝ ս. Աստուածածնի ծննի կիրակի առաւօտեան՝ 59 տարեկան հասակի մէջ։

Հանգուցեալ Սրբազանը Տաճկահայոց հոգեւորական դասի նշանաւոր ներկայացուցիչներից մէկն էր։ Ծնուած էր Պոլսի Պալաթ թաղում 1840 թուականին։ իւր նախնական ուսումն առել է Պալաթի և յետոյ Սկիւտարի ս. Խաչ վարժարանում։ աւարտել է ապա Սկիւտարի ճեմարանը։ 1862—64 թուականներին նա հրատարակեց «Թուշնիկ Պեդասեան» անուն հանդէսը։ իրրև ուսուցիչ եղել է Կեսարիայում՝ Երզնկայում՝ Կարնում՝ Վանում՝ Սեբաստիայում՝ Սսում և Աղանայում։ 1866 թուին Վանում՝ ձեռնադրուած է վարդապետ՝ Տ. Խաչատուր եպիսկոպոսից՝ որ յետոյ Աղթամարի կաթուղիկոս եղաւ։ 1867 69 թ. քարոզչական պաշտօններ վարեց Պոլսում։ 1869—70 թ. Բաբերդի առաջնորդ կարգուեցաւ։ Ն. Ս. Օծութեան ներկայ Ամենայն Հայոց Հայրապետի պատրիարքութեան օրով առաջնորդ ընտրուեց Երզնկայի և Բաբերդի միացեալ վիճակին։ Ցաջորդ տարին՝ 1871 թ. Երզնկայի վանքերի վերատեսուչ կարգուեցաւ միանգամայն՝ որից 1873 թ. հրաժարեցաւ։ Տ. Ներսէս պատրիարքի օրով Բաբերդը բաժանուեց Երզնկայից։ Ալէքսիանեան Սրբազան երկու տարի էլ Երզնկայի Առաջնորդութիւնը շարունակեց՝ որից վերջնականապէս հրաժարուեց 1876 թուին։ Նոյն թուին եղաւ Առաջնորդ Մշոյ։ 1877 թուին ձեռնադրուեց Տարօնոյ եպիսկոպոս՝ Տ. Տ. Գէորգ կաթուղիկոսից։ 1880 թուին դարձաւ Պոլիս՝ ուր մինչև 1885 թ. վարեց Սկիւտարի ս. Խաչ եկեղեցու քարոզչութեան պաշտօնը։ այդտեղ իր պաշտօնավարութեան գլխաւոր գործն է համարուում եկեղեցու մեծ զանգակատան շինութիւնը։ 1885 թ. վերսին գնաց Մուշ։ 1886 թ. անցաւ Վան՝ ուր մնաց մինչև 1888։ այդ տեղ նա ձեռնարկեց Վարագայ վանքի վերանորոգութեանը։ հիմնեց մի ժառանգաւորաց վարժարան գիշերօթիկ և ցերեկեայ։ 1888 թ. հրաւիրուեց Տիգրանակերտի առաջնորդութեան՝ բայց մերժելով դարձաւ Պոլիս՝ ուր մինչև այժմ վարում էր ս. Խաչ եկեղեցու քարոզչութեան պաշտօնը։ 1895 թ.՝ ինչպէս ամէնքին ծանօթ է՝ ընտրուեց Կիլիկիոյ կաթուղիկոս՝ Աղանայում գումարուած Ընտրողական ժողովից՝ որի նախագահն էր Ազգ. Պատրիարքարանի պատուիրակ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Ցովհաննէսեան։ բայց այս ընտրութիւնը անցեալ տարուայ փետր. ամսին Խառն ժողովի կողմից չեղեալ համարուեց։ Պոլսում եղած միջոցին Տ. Գրիգորիս Սրբազան ընտրուել է Կրօնական ժողովի անդամ և ատենապետ։ իւր գաւառական պաշտօնավարութիւնների ժամանակ քսանի չափ ուսումնարանների և եկեղեցիների շինութեան պատճառ է եղել։ ունէր Գ. կարգի Մէճիտիէ և Գ. կարգի Օսմանիէ պատուանշան։

Հանգուցեալ Սրբազանի յուղարկաւորութեան տխուր հանդէսը տեղի է ունեցել երկուշաբթի 16 օգոստ. Ս. Պատրիարքի նախագահութեամբ։ պատարագիչ եղել է Տ. Գրիգորիս Արքեպ. Ցովհաննիսեան։ ներկայ են գտնուել Կ. Պոլսոյ գրեթէ բոլոր բարձրաստիճան եկեղեցականները՝ ինչպէս նաև Բերայի դպրաց դասը՝ Ազգ. Վարչութեան ժողովական և խորհրդական անդամներ և այլն։ Պատարագիչ Սրբազանը քարոզից յետոյ շնչով մի քառորդ ժամու չափ և Ս. Օծման կարգը կատարեց «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգելուց առաջ։

Օծումից առաջ Ամեն. Ս. Պատրիարքը խօսեցաւ դամբանականը՝ որ տեւեց մի ժամ։ մանրամասն կենսագրութիւնն արեց Սրբազան հանգուցեալի՝ գովելով նրա՝ իբրև արդիւնաւոր եկեղեցականի՝ գործերը և մաղթելով՝ որ Տէր Աստուած անպակաս անէ նրա նման անձեր մեր ազգի միջից։

Ազգային եկեղեցական—յարաբերական խնդրոց կարգաւորութեան համար երեք շաբաթ առաջ կայսերական իրաւէ մը եղած էր։ այս խնդրոց առաջինն էր Կիլիկիոյ կաթուղիկոսութեան խնդիրը։ Ն. Կ. Վեհ. հրամայեց Կիլիկիոյ նոր կաթուղիկոսին ընտրութիւնն՝ ըստ վաղնջուց ընկալեալ սովորութեան։ Ամեն. Ս. Պատրիարքն՝ Խառն ժողովոյ անցեալ Դշ.-ի նստին մէջ կարդաց կայս. Իրատէն աւետող Դատական Նախարարութեան թէղրաֆին։ ժողովը որոշեց Ս. Պատրիարքին յանձնել որպէս զի՝ նախընթաց օրինակներուն համաձայն՝ ընտրական գործողութեանց ձեռնարկուի։ տնօրինեց որ

Երուսաղէմի վանքին Լուսարարապետ Տ. Սահակ եպս. Խապայեան պաշտօն ունենայ՝ ի դիմաց Ազգ. պատրիարքարանի՝ Ատանայի և Սսոյ մէջ հսկելու ընտրական գործողութեանց վրայ։ Հարկ եղած հրահանգներն ստանալով Ս. Պատրիարքէն և տեղեկագրելով ու հաղորդելով կարևորը։ Ն. Ամեն. Կայս. իրատէն և Խառն ժողովին որոշումն հեռագրաւ հաղորդեց Սիս։ կաթող. տեղապ. Տ. Կիրակոս Սրբազանին, և Երուսաղէմի Տ. Սահակ եպս. Խապայեանին, իբրև պատրիարքարանի պատուիրակ և հսկող ընտրական գործողութեանց, պատուիրելով այս վերջնոյն որ Ատանա երթալու պատրաստուի անմիջապէս։ Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք հայրն արդէն հաւանած էր լուսարարապետ Սրբազանին տրուած պաշտօնին։

Ըստ անօրինութեան կայս. կառավարութեան և ըստ վաղեմի ընկալեալ դրութեան, Կիլիկիոյ կաթողիկոսական թեմերուն եկեղ. և աշխարհ. ներկայացուցիչք, ըստ օրինի ընտրողական ժողով կազմելով Ատանայի մէջ, արտօնութիւն պիտի ունենան Կիլիկիոյ նոր կաթողիկոսին ընտրութիւնը կատարելու Սսոյ միաբան վեց եպիսկոպոսաց մէջէն, կամ գուրսէն՝ Էջմիածնի մէջ ձեռնադրեալ եպիսկոպոսներէն։ – Կիլիկիոյ 6 եպիսկոպոսներն են Տ. Կիրակոս Սրբազան, կաթողիկոսական Տեղապահն ի Սիս, Յ. Գազանճեան եպս.-ն ի Պէրութ, Փուռնուզի վանահայրը, Կարապետ եպս.-ն ի Զէյթուն, Տ. Մկրտիչ Սրբազան Վեհապետեան ի Պէջիրբ-տէրէ, և Արբահամ եպս. ի Պոլիս։

Իսկ Կ. Պոլսոյ եպիսկոպոսներէն կը յիշուին Տ. Խորէն Արքեպս. Աշըգեան, Տ. Բարթուղիմէոս Արքեպս. Զամչեան և Տ. Մեսրոպ Արքեպս. Բայց այս 9 եպիսկոպոսները չեն ներկայացներ ամբողջ ցուցակն ընտրելի եպիսկոպոսներուն։ Կայս. իրատէն ազատ կը թողու տեղացիներն՝ իրենց յարմար գտած բոլոր եպիսկոպոսներուն անունները դնելու ընտրելեաց ցուցակին մէջ։ Արդէն կը յիշուին պատրիարքարանի կողմէ ղրկուող պատուիրակ Սրբրազանին անունը։ Կեսարիոյ առաջնորդին անունը։ նաև Երուսաղէմի փոխ. սրբազանին անունը։

—Հաճնի մէջ նոր որբանոց պիտի բացուի և պիտի հոգացուի Մոսկուայի ազգայնոց նպաստով։

— Իզմիրէն Ստ. Թէստերէճեան և իր. Ազն. Տիկին Մարիամ Գարաթաշի իրենց ծովափնեայ միլլ տունը, կամ կարասեաք հանդերձ արժողութեամբ աւելի քան 5—600 ոսկւոյ, օրինական մի-ջոցաւ, յանուն Ս. Առաջնորդին, նուիրած են Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցին։

— Իրենց պաշտօնատեղիները կը մեկնին Տ. Արիստակէս ծ. Վ. Վանքեան, Ամասիոյ Առաջն. Տեղապահ, և Տ. Արիստակէս Վ. Խաչատուրեան, Ակնայ Առաջն. Տեղապահը։

— Քէմախի Ազգայինք պատրիարքարան ուղղեալ հանրագրով մը փափագ յայտնած են որ յետագային Քէմախի և Երզնկայի թեմերուն միացման որոշման գործադրութիւնը։

— Բրովիտէնսի (Ամերիկա) հայ գաղթականութեան քարոզիչ Վաղինակ վարդ. Սիսակեան վախճաներ է։ Հանգուցեալը 42 տարեկան էր և քարոզչական պաշտօններ վարած էր մայրաքաղաքիս մէջ և Պուլկարիա։

— «Մեր Ս. Հարց Դաւանութիւն» անուն անճահ տետրակին հեղինակ Մկրտիչ վարդ. Աշճեան՝ պաշտօնանկ լինելով Հայ—Հռոմէական պատրիարքարանի գործակատարի պաշտօնէն, Հռոմ գնաց։

— Կարինէն Մհտ. Կարապետ աղա Տ. Ղուկասեան քաղաքին Ս. Եկեղեցւոյն կտակած է իր 250 ոսկի արժողութեամբ տունը։ իսկ Ստեփան աղա Մհտ. Խաչատուրեան իր 600 ոսկի արժողութեամբ ջրաղացը։

— Բասէն և Խնուս գաւառակաց համար Անգլիայէն ղրկուած 400 ոսկին հիւպատոս Մր. Մասէի և ամերիկեան Միսիոնար Մր. Սթէյփըլթընի կարգադրութեամբ և պատուելիներու ձեռամբ կէս առ կէս բաշխուած է նոյն գաւառակաց հայ և հայ—բողոքական աղքատաց։ Այս վերջիններուն շատ օգնած են, ըսելով թէ Քրիստոս ալ Յովհաննէսը միւս աշակերտներէն շատ կը սիրէր։ Դարավերջի կ մեկնութիւն։ Բողոքական պատուելիներն հայ կարօտելոց համար ղրկուած նպաստն 50 % տոկոսով կուտան։ ապոնցմէ մուրհակ առնելէ յետոյ. ուրեմն միայն Բաղերանները չեն որ հոգիներու փրկագին կը պահանջեն։

— Միսիոնարութիւնը Բասենի դաշտին մէջ յանուն որբոց գպրոց մը բացած է։ ուր 2—2½ տասնեակ աշակերտ կայ։ բրոբականտայի համար։

— Կարնոյ ամերիկ. որբանոցաց երկսեռ հայ աշակերտք հակառակ միսիոնարական որոշման։ կարգելուին Կիր. և տօն օրեր Ազգ. եկեղեցի յաճախելէ։ Մր. Սթէյփըլթընն այս արգելքն անցլ. հիւպատոսին կը վերագրէ։ Առաջնորդարանի կողմէն բողոքուած է նահանգին կուսակալ Բէուֆ փաշային։ որ պահանջած է գոհացում տալ։

— Քանտիայէ Տ. Մանուէլ քհյ. Կրետէի մեր ազգային եկեղեցիին և կալուածոց նորոգութեան կարօտ խղճալի վիճակը նկարագրած ըլլալով։ կը լսենք թէ այս օրերս պատրիարքարանէն գումար մը պիտի ղրկուի։

— Տ. Վահրիճ վարդ. այս անգամ ալ մանրամասն տեղեկագիր մը ղրկած է ի Պատրիարքարան՝ իր այցելութեան առթիւ Վանայ գիւղերը. զի Տ. Ներսէս Սրբազանի տնօրէնութեամբ։ երկար պտոյտ մը կ՚ընէ Վանայ կուսակալութեան գիւղերը։ նաև Աղթամարայ թեմերուն մէջ, ժողովրդեան վիճակը մօտէն դիտելու և հոգևոր պէտքերն իմա-

նալու համար։ Տ. Ներսէս Սրբ. գրած է Ս. Պատրիարքին թէ մինչև որ ուրիշ վարդապետ մը իրեն քով զրկուի, չի կրնար թողուլ որ Տ. Վահրիձ վարդ. Քոյի երթայ։ Կրօնական ժողովը կարդալով Տ. Ներսէս Սրբազանի սոյն նամակը, հաւանութիւն տուաւ Վահրիձ վարդապետի մնալուն։ Թէև Գէորգեան Տ. Արսէն վարդ. մը, ժամանակ մը Արմաշ մնալէ ետքը, ճամբայ հանուած էր դէպ իր ծննդավայրը, բայց անիկայ Լիմի և Կաուցի նոր վանահայր Տ. Յովսէփ եպս.-ին քով մնալու համար է՝ իրրև քարտուղար։

— Թոռոսզդոյի և Պրուսայի առաջնորդները ի մօտոյ իրենց վիճակը պիտի դառնան։

— Նպաստից Յանձնաժողովը Նիստ գումարելով Ազգ. Պատրիարքարանի մէջ, գաւառ. որբանոցներու, ինչպէս և Եսիգուլէի Ս. Յակոբայ Որբանոցի մասին խորհրդակցելէ վերջ, որոշեց բոլոր որբանոցաց երկերկու ամսեան մէջէն զրկել այս անգամ, ձմեռուան պէտքերն հոգալու համար։ Իմանալով նաև թէ Կարնոյ և այլ մի քանի գաւառաց ամերիկեան որբանոցներու մէջ պատսպարեալ որբերն եկեղեցի չեն զրկուիր և անոնց կրօնական ուսուցման խնամք չի տարուիր, որոշեց խնդիրը ներկայել Ամերիկեան կեդր. Որբախնամ մարմնոյն։

— Աֆիոն Գարահիսարցի վաճառական Սարգիս էֆ. Ըշըլեան 50 ոսկի նուիրած է Արմաշի Դպրեվանքին, ի նպաստ աղրիւրի մը շինութեան՝ վանքին մօտ և իրրև կալուած խանութի մը շինութեան։

— ՍիրբէՀի թաղի ծովեզերեայ Իսմայիլ փաշա խանին Սանաս. վարժարանին համար իրրև կալուած գնուելու գործողութիւնը լմնցեր է և 20,000 ոսկին վճռ. պրն. Ղ. Եղեանց Կ. Պոլիս զրկեր է՝ Լոնտոնի վրայ փոխ" գրով։

— Զաւէն ծ. Վ. Կարինէն Դերջան մեկնեցաւ հովուական պտոյտ մ'ընելու համար։

— Վարդավառի տօնին առթիւ Տ. Յարութիւն Ս. Պատր. հայրն հանդիսաւորապէս պատարագելով Ս. Յակոբեանց տաճարին մէջ, հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ օրուան տօնին վրայ և իր ունկընդիրները յորդորեց ի պայծառափայլ պլակերպութիւն՝ հոգւով, սրտով, մտքով և զգացմամբ։

— Տ. Ներսէս Սրբազան ստուգեր է որ Վանայ Սպակերտի գաւառին կարօտելոց անուամբ անգլ. նպաստամատոյց մարմնէն զրկուած 300 ոսկիի արմտիքը տեղացիք 150 ոսկիի ծախելով հնչուն դրամը գրպաներ են։ Այս պատճառաւ, իրեն եկող Սպակերացիներուն նպաստ չէ ուղեր տալ։ Ասոր վրայ, եկողները կաթոլիկներուն դիմելով, երկերկու մէջիտ առեր և իրենց արձանագրութիւնը փոխել տուեր են։

— Թէ Տ. Զաւէն ծ. Վ. և թէ Տ. Բարգէն ծ. Վ. կը խնդրեն Ս. Պատրիարքէն որ Տիրայր վարդապետ զրկուի Էրզրում կամ Մուշ։ Համակրելի արեղան կիսափաքի ընդունել այս գաւառային պաշտօններէն մին և արդէն նախապատուութիւն կուտայ Կարնոյ, քանի որ Կարմիր վանքին մէջ 100 որբ կան այսօր և կարելի ու պէտք է ամէն կերպիւ շնորհքով վիճակի մը մէջ դնել դիրքով ու տեղով կարևոր այդ վանքն ու հաստատութիւնը։

— Արմաշի Դպրեվանքէն Պօլսեցի պ. Դանիէլ Թուրեան և պ. Խաչիկ Խաչատուրեան, ուխտագիր տալով Տ. Եղիշէ եպս. Դուրեանին, կուսակրօնութեան վիճակն ընդունած են, և հիմա Ն. Գերապատուութիւն Ս. Պատրիարքէն և Կրօն. ժողովէն արտօնութիւն կինդրէ զանոնք աւագ սարկաւագ ձեռնադրելու։

— Բարիզ բնակող Էգնայեան եղբարք 6 որբ ուղած են, իրենց ծախքով արհեստ ուսուցանելու համար Բարիզի մէջ։

— Հեռագրուած է պատրիարքարան թէ Մշոյ Ս. Կարապետ վանուց փոխ վանահայր Թադէոս Վ. վախճաներ է ամսոյս 21-ին։

— Տիգրանակերտի առաջն. տեղապահ Եզեկիէլ Վ.-ի կրկնակի դիմումներուն վրայ, ամերիկեան որբանոցին 150-ի չափ որբերը և որբուհիները սկսեր են ամէն օր ազգային վարժարան և կիւրակի ու տօն օրերն ալ եկեղեցի յաճախել։

— Պանորմայի աղջկանց վարժարանին շինութիւնն սկսաւ տեսնելու արժանի է ժողովրդեան եռանդը։ Մանաւանդ երիտասարդաց, որք եռանդով կ'աշխատին հող, ջուր, քար կրելով։ Կը յուսացուի որ մի քանի ամիսէն ազգն իր անուան պատիւ բերող շէնքի մը տիրանայ։

— Կրօն. ժողովը որոշեց որ Կամախը մնայ Երզնկայի հոգևոր իշխանութեան ներքև։ Կամախի քահանան առաջն. փոխանորդ մնալու պայմանաւ։

— Պրուսայի առաջնորդ Տ. Յովհաննէս եպ. Արշարունի մեկնեցաւ իր պաշտօնատեղին։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՑ «ԱՐԱՄԵԱՆ ԵՒ Ս. ԱՆՆԱՑԵԱՆ» ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ, 1896/7 ԵՒ 1897/8 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ։ *

Արամեան դպրոցում 1897/8 տարուայ սկզբին կային 95 աշակերտ։ Նոր ընդունուեցան 16 աշակերտ.

* Տես Արարատ 1899 թ. յունիս եր. 346։